ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«31» մարտ 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____ Հ. Այունց

ՍՅ-ԳԲԽ-101/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.07.2015թ. թիվ 1/73-1/20170-15, 22.02.2016թ. թիվ 1/73-3/6164-16 և 23.12.2016թ. թիվ 03/73-3/28526-16 գրություններով ներկայացված «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 23.07.2015թ. թիվ 2465-311 գրության և ՀՀ պաշտպանության նախարարության 15.12.2016թ. թիվ ԴՎԱ/3932 գրության հիման վրա, 29.07.2015թ. թիվ 1/73-1/20170-15, 22.02.2016թ. թիվ 1/73-3/6164-16 և 23.12.2016թ. թիվ 03/73-3/28526-16

գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու համար:

2. «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 29.09.2015թ. թիվ 02/04.1/2564-15, 23.02.2016թ. թիվ 01/04.2/623-16 և 27.12.2016թ. թիվ 01/04.1/4733-16 գրություններով դիմել է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին, որին ի պատասխան՝ Ընկերության կողմից կարծիք չի ներկայացվել:

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 22.12.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-101/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն ՍՑ-ԳԲԽ-101/16 բողոքը քննող հանձնաժողովի 08.02.2017թ. ժամը 16:50-ի նիստի ժամանակ բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության կողմից 08.02.2017թ. տրված թիվ 547 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 08.07.2015թ. (հայտերը ներկայացնելու օրվա) դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորություններ՝ 6105 ՀՀ դրամ բնապահպանական վճարի մասով և 852 ՀՀ դրամ՝ սոցիալական վճարի մասով և հայտնել է, որ Ընկերությունը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

3. ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.07.2015թ. թիվ 2465-311 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից 01.07.2015թ. հրավիրվել է «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/9» և «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/16-

15/8» ծածկագրերով քիմիական նյութերի և բժշկական պարագաների գնման ընթացակարգերը: 10.07.2015թ. տեղի է ունեցել հայտերի բացման նիստը և այդ ընթացակարգին մասնակցել և համապատասխան չափաբաժինների մասով առաջին տեղ է զբաղեցրել «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն, որի հետ Պատվիրատուն պետք է կնքեր պայմանագիր: Սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկված հարցմանն ի պատասխան ստացված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 132 426 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 22.12.2016թ. ժամը 17:30-ին և 08.02.2017թ. ժամը 16:50-ի Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-101/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.12.2016թ. թիվ ԴՎԱ/3932 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 72-րդ չափաբաժնի մասով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրի քննարկման արդյունքում պարզվել է, որ այն տարբերվում է հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրից և համարժեք չէ դրան: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 51-րդ կետը՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկել վերը նշված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից շտկում չի ներկայացվել և հիմք ընդունելով Կարգի 52-րդ

կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշել է 72-րդ չափաբաժնի մասով մերժել «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի հայտը:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-101/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 29.07.2015թ. թիվ 1/73-1/20170-15, 22.02.2016թ. թիվ 1/73-3/6164-16 և 23.12.2016թ. թիվ 03/73-3/28526-16 գրություններով ներկայացված «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/9» և «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/16-15/8» ծածկագրերով ընթացակարգեր.

- ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/9» և «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/16-15/8» ծածկագրերով ընթացակարգերին մասնակցելու նպատակով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն ***08.07.2015թ.*** հայտեր է ներկայացրել:
- Ընկերությունը հայտերի թիվ 2 հավելվածներով՝ ընթացակարգերին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտերը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***
- ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի *(հղումը կատարված է մինչև ՀՀ կառավարության 07.07.2016թ. N 700-Ն որոշումը ուժի մեջ մտնելը)* 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.07.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը

հայտերը ներկայացնելու ներկայացնելու օրվա (08.07.2016թ.) դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 132 426 ՀՀ դրամի չափով:

- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.07.2015թ. Պատվիրատուին տրամադրվել է Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների վերաբերյալ եզրակացության ճշգրտված տարբերակը, որի համաձայն՝ ***Ընկերությունը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 125 469 ՀՀ դրամի չափով:***
- «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2015թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետով և «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2015թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով կայացված որոշումներով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/8» և «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/9» ծածկագրերով ընթացակարգերին ներկայացված հայտերը մերժվել են:
- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.02.2017թ. տրված թիվ 08.02.2017թ. տեղեկանքի համաձայն՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն 08.07.2015թ. (հայտերը ներկայացնելու օրվա) դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորություններ՝ ***6105 ՀՀ դրամ բնապահպանական վճարի մասով և 852 ՀՀ դրամ՝ սոցիալական վճարի մասով:***
- «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը ԳԲԽ-101/16 բողոքի քննության շրջանակներում 23.02.2017թ. թիվ 01/04.1/602-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե Ընկերությունը ***08.07.2015թ. դրությամբ (հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:***
- Ի պատասխան Կենտրոնի 23.02.2017թ. թիվ 01/04.1/602-17 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 15.03.2017թ. թիվ 1/6-1/8321-17 գրությամբ հայտնել է, որ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն 08.07.2015թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով ընթացակարգ.

• ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

• Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով ընթացակարգի 72-րդ չափաբաժնի մասով որպես պահանջ նախատեսվել է ապրանքի ԳՕՍՏ 4919.1-ին համապատասխան լինելը:

• Ընկերությունը հայտի թիվ 4.1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 6, 9, 14, 15, 17, 18, 19, 23, 24, 26-33, 35-48, 50-53, 60, 61, 68 չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդ որում, Ընկերությունը վերոհիշյալ հայտարարությամբ պարտավորվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

• Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2016թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 23-րդ, 24-րդ, 26-27-րդ, 33-րդ, 41-րդ, 44-45-րդ, 52-րդ, 72-րդ, չափաբաժինների մասով և որոշվել է ծանուցել Ընկերությանը հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև 26-27-րդ, 41-րդ, 44-րդ, 45-րդ չափաբաժինների մասով՝ չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորումները ներկայացնելու վերաբերյալ:

• Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.08.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ Ընկերության կողմից 26-27-րդ,

41-րդ, 44-րդ, 45-րդ չափաբաժինների մասով չի ներկայացվել չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորում, ուստի այդ չափաբաժինների մասով Ընկերության հայտը մերժվել է, իսկ 72-րդ չափաբաժնի մասով առկա է անհամապատասխանություն, այն է՝ պահանջվող ԳՕՍՏ 4919.1-ի փոխարեն նշված է ՏՈՒ 6-00-29-79:

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, 12.08.2016թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը, որը սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել:
- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 72-րդ չափաբաժնի մասով մերժվել է:

6. <u>ՍՑ-ԳԲԽ-101/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 23.07.2015թ. թիվ 2465-311, ՀՀ պաշտպանության նախարարության 15.12.2016թ. թիվ ԴՎԱ/3932 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

1. ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կազմակերպված «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/9» և «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/16-15/8» ծածկագրերով ընթացակարգեր

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն ***08.07.2015թ.*** մասնակցության հայտեր է ներկայացրել ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/9» և «ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/16-15/8» ծածկագրերով ընթացակարգերին:

Ընկերությունը ընթացակարգերի մասնակցության հայտերի 2 հավելվածներով՝ ընթացակարգերին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտերը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.07.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտերը ներկայացնելու ներկայացնելու օրվա (08.07.2015թ.) դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 132 426 ՀՀ դրամի չափով, իսկ 23.07.2015թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված ճշգրտված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 125 469 ՀՀ դրամի չափով:***

Ընկերությունը ՍՑ-101/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.02.2017թ. տրված թիվ 547 տեղեկանքը, համաձայն որի՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն 08.07.2015թ. (հայտերը ներկայացնելու օրվա) դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով

պարտավորություններ՝ ***6105 ՀՀ դրամ բնապահպանական վճարի մասով և 852 ՀՀ դրամ՝ սոցիալական վճարի մասով:***

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը ՍՑ-101/16 բողոքի քննության շրջանակներում 23.02.2017թ. թիվ 01/04.1/602-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե Ընկերությունը ***08.07.2015թ. դրությամբ (հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ,*** որին ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 15.03.2017թ. թիվ 1/6-1/8321-17 գրությամբ հայտնել է, ***որ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն 08.07.2015թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 15.03.2017թ. թիվ 1/6-1/8321-17 գրությունը, համաձայն որի «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն 08.07.2015թ. դրությամբ (հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, գտնում ենք, որ Ընկերությանը սույն հիմքով, այն է՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով ընթացակարգ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ***

խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորություն,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի սահմանում է *(հղումը կատարված է մինչև ՀՀ կառավարության 07.07.2016թ. N 700-Ն որոշումը ուժի մեջ մտնելը)*, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին

տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով 72-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է, որ ապրանքը պետք է համապատասխանի ԳՕՍՏ 4919.1-ին:

Ընկերությունը ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4.1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 6, 9, 14, 15, 17, 18, 19, 23, 24, 26-33, 35-48, 50-53, 60, 61, 68 չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2016թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 23-րդ, 24-րդ, 26-27-րդ, 33-րդ, 41-րդ, 44-45-րդ, 52-րդ, 72-րդ, չափաբաժինների մասով և որոշվել է ծանուցել Ընկերությանը հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև 26-27-րդ, 41-րդ, 44-րդ, 45-րդ չափաբաժինների մասով՝ չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորումները ներկայացնելու վերաբերյալ:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեն ներկայացվել 26-27-րդ, 41-րդ, 44-րդ, 45-րդ չափաբաժինների մասով չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորումներ, ուստի գնահատող հանձնաժողովը նշված չափաբաժինների մասով մերժել է Ընկերության հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.08.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ 72-րդ չափաբաժնի մասով առկա է

անհամապատասխանություն. այն է՝ պահանջվող ԳՕՍՏ 4919.1-ի փոխարեն նշված է ՏՈՒ 6-00-29-79:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը, հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, 12.08.2016թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը, որը սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել:

Հիմք ընդունելով Ընկերության կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու հանգամանքը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընթացակարգի 72-րդ չափաբաժնի մասով մերժել է Ընկերության հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Կենտրոնը արձանագրում է, որ Ընկերության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում թույլ է տրվել ստանձնած պարտավորության խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել Ընթացակարգի 26-27-րդ, 41-րդ, 44-րդ, 45-րդ չափաբաժինների մասով չհիմնավորված ցածր գնի հիմնավորումներ, ինչպես նաև Կարգի 51-րդ կետի համաձայն սահմանված ժամկետում չի շտկել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը: Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ Ընկերությունը գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտել է մեկ անգամ, գտնում ենք, որ սույն հիմքով Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 29.07.2015թ. թիվ 1/73-1/20170-15, 22.02.2016թ. թիվ 1/73-3/6164-16 և 23.12.2016թ. թիվ 03/73-3/28526-16 գրություններով ներկայացված «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01232586) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և Ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-101/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան